600.0197.29.06.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

29 հունիսի 2016 թվականի №197Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի №771Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՄԵԿՏՈՐ ՔՎԱՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2016 թվականի մայիսի 30-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 2-ի «ՄԵԿՏՈՐ ՔՎԱՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Զորագյուղ-3» փոքր հիդրոէլեկտրա-կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №771Ա որոշման՝

   1) 1-ին կետում «Զորագյուղ համայնքում կառուցված ոռոգման ջրատարի վրա «Զորագյուղ-3» փոքր հիդրոէլեկտրակայանում» բառերը փոխարինել «Զորագյուղ համայնքի վարչական տարածքում՝ Զորագյուղ գետի անանուն վտակի վրա կառուցված «Զորագյուղ-3» փոքր հիդրոէլեկտրակայանում (բնական ջրահոսք)» բառերով.

   2) 2-րդ կետով հաստատված «ՄԵԿՏՈՐ ՔՎԱՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Զորագյուղ-3» փոքր հիդրոէլեկտրակայանում

էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0339 լիցենզիայի պայմանների՝

ա. 3-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) 2015 թվականի դեկտեմբերի 23-ից մինչև 2016 թվականի հունիսի 29-ը վերակառուցման ժամանակահատվածն է,»,

բ. 5-րդ, 6-րդ և 9-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զորագյուղ համայնքն է՝ Զորագյուղ գետի անանուն վտակի վրա (բնական ջրահոսք):

6. Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է 610 կՎտ հաշվարկային հզորությամբ «Զորագյուղ-3» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:»,

«9. «Զորագյուղ-3» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 610 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) հիդրոտուրբին №1՝ Р-340/320, 340 կՎտ, 2009թ,
2) գեներատոր №1՝ СГ-2-350, 350 կՎտ, 2009թ,
3) հիդրոտուրբին №2՝ Р-270/275, 270 կՎտ, 2009թ,
4) գեներատոր №2՝ СГ-2-300, 300 կՎտ, 2009թ:»:

2. «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել «Մարտունի» մասնաճյուղի 2015 թվականի դեկտեմբերի 16-ի №ՎԲ02/155 գրությամբ ներկայացված բանկային երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև «Զորագյուղ-3» փոքր հիդրոէլեկտրակայանի վերակառուցման համար ստանձնած ութ հարյուր քառասուն հազար դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
29 հունիսի 2016թ.
ժամը 16⁰⁰